ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԴԻՊՈՒԱԾՈՑ ՄԱՆՈՒԷԼ ՇԱՀԻՆԵԱՆ ԿԻՄԻՇԽԱՆԱՑԻ ՊԱՏՄԱԲԱՆԻՍ 1835 Ի ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՍ ՂՐԻՄՈՑ·*)

Առաջնորդական կառավարութիւնք ի Տփխիս։

Լուսաւոր մտաց լուսաբանեալ է Տէրունեան վճիռ ամենայն, որ զփափուկսն զգեցեալ են ի դրունս թագաւորաց են։ Վասն նախնի ճշմարիտ աշակերտի բանին Հարքն մեր ոչ են հոգաունակեալք, այլ արտաքին զարդուց Հոգևոր անձանց, եթէ ոչ միայն ուսման մանկութեան և վարուց մաքրութեան։

Նմին իրի մինչ ի 1800 թիւն Փրկչական ոչ էր սովորութիւն յազգի մեր Հոգևորականաց մեր ունել զմարմնական զարդարանս, որ եղև ի Յովսէփ Արղութով արքեպիսկոպոսէ պատճառեալ խանգարումն նազելի բարեկարգութեանց եկեղեցւոյ և եկեղեցականաց մերոց։

Քանզի յիշեալ Արք Եպիսկոպոսն՝ յընտրելն իւր Հայրապետ ի Ռուսաստան երկու քահանայից, ի Թիֆլիզ երից, պարանոցի շղթայիւ խաչ տալով, ճանապարհ եղև եւ Եփրեմ Հայրապետի զնոյն Վեհափառութիւն գործել. բայց երկաքանչիւրոցն ես իբր արժանաւոր անձանց առհաւատչեայ հաւատարիմ ծառայութեանց ձրիապէս պարգև ի Վեհագունէ առ ստորագրեալսն իւր շնորհ ծաւալէին։

Նաև Ներսէս Արք Եպիսկոպոսն յընթացս տասն և չորս ամ Առաջնորդութեամբ իւրով ի Տփխիս և ի վիճակս նորին, հազիւ չորս քահանայ ձեռնադրեալ իցէ, և այն ըստ կանոնի եկեղեցւոյ՝ ձրիաբար, առանց մարմնաւոր ակնկալութեանց յումեքէ, որպէս վկայեն ամենեքեան, որք գիտեն զնա։

Իսկ յաւուրս Առաջնորդութեան Յոհաննէս Արք Եպիսկոպոսի յընթացս տասն ամսոց, այսինքն, ի 1830 ի Նոյեմբերի մէկէն, մինչի 1831 սեպտեմբերի 6, յորում աւուր ել ի Տփխիսու, տասն և հինգ քահանայից խարէ փիլոն, հասարակ կամ ծաղկեայ զանազան գոյնք, զանազան գնովք, մեք դիցուք միաշար տասնական թումանս Տասն քահանայից մախմուր արախճին կամ թաղղայ, ես տասն թումանով, որ է պատիւ աւագապատիւ քահանայի·

---

*) Տես «Արարատ» 1916 Թ· Յուլիս-Օգոստոս էջ 592—598·

ֆսան և հինգ քաղաքական և գիւղական քահանայից խաչք պարանոցի, քսանական թումանովք, վաթսուն և չորս նորընծայ քահանայից օրհնութեանց՝ ձեռամբ այլ և այլ եպիսկոպոսաց, քսան և հինգական թումանով, որք ամենեքեանքն արծաթ մանէթ թիֆլիզու թումանք են, որոց մէկ թումանն տասն մանէթ է առ նոսա միշտ։ Յայտ է թէ ի վերոյ գրեցելոց գումարն է երկու հազար երեք հարիւր յիսուն թուման, որ լինի Երևանու հինգ հազարութն հարիւր եօթանասուն և հինգ թուման. բայց յայսց պաշտօնավաճառութեանց և Սիմոնական արդեանց, տարեկան եկամուտք ի վիճակէ և ի քաղաքէ և ի պսակաց, ի հոգէբաժնից, ի հասից և ի չհասից և յայլ պատճառս, անպակաս հազար երկու հարիւր թումանք լինին ամենայն ըստ յամէ։ Այլ և Հաժտարխանու Առաջնորդ Գայլակերեան Յոհաննէս եպիսկոպոսի վախճանմանն զկնի, տասն հազար ռուբլի փողն եհաս առ նա, որ էր երկու հարիւր յիսուն թուման թիֆլիսու դրամ և չորս սնդուկ եկեղեցական զարթք և զգեստք, յորոց եօթն հարիւր թուճի շուրջառ և այլ եկեղեցական զարթարանս վաճառեաց թիֆլիզու եկեղեցեացն։ Նոյնպէս ի Կայսերէ երեք հարիւր ռակի, այսինքն ինն հարիւր մանէթ, առաջին ճանապարհորդութեանն և վեց հազար մանէթ Հայրապետ Օծութեանն իբր ծախուց գումար ստացաւ շնորհիւ Ղրաֆ Պասգևիչին, այս ամենեցուն գումարաց գումարն եղև, ըստ վերնոյն հինգ հազար հինգ հարիւր իններսուն թիֆլիզի թումանք, որ լինի տասն երկու հազար, ինն հարիւր եօթանասուն և հինգ երևանու թումանս։

Այս գումարք Արդեանց, արտաքոյ Աթոռային արդեանց գոյացան յընթացս միոյ տարւոյն, նաև վասն պարտուց որ խընդրեալ էին ի Կայսերէ, ի 1835 ամին, տասն և հինգ հազար մանէթ ի գանձարանէ իբր պարտք՝ շնորհեցաւ, որ ընդ վերնոյն լինի գումարաց-գումարք երևանու տասն և վեց հազար եօթն հարիւր քսան և հինգ թումանք։ Ի հրաժարիլ Եփրեմ Հայրապետին ճնացեալ էր միայն ութն հազար թուման Աթոռային հին պարտք։

Յայտ է թէ այժմ յետ պարտուցն վճարման, կիսով չափ և ևս յաւելաւ գումար արդեանցն, եւ զոր յառաջն վասն պարտուց որ խոստացաք գրել, այժմ ըստ լրութեանն յայտնեցան և զկնի կաթողիկոսութեան սոյն Հայրապետի ելանեն տարաձայնութիւնք ի միաբանան, են պատճառ այսպիսի անյայտ լինելն, որ ի կարգին։

Պատճառ գնալոյն իմոյ ի Տփխիս։

Յորժամ սրբազան Հայրապետս ունէր գալ ի Թիֆլիզ, բարուք գիտէր թէ Աթոռային միաբանութեանց անծանօթք են եւրոբական կարգաց գրութիւնք և կառավարութիւնք, վասնորոյ վկայութեամբ Անհաւորին կամ էր նմա ունիլ զիս ընդ իւր ի Տփխիս։

Իբրև լցան ամենայն բաղձանք իւր և կարգադրեցան ոճք գրութեանց, եկին և կուտեցան ընիկ հարազատ միաբանքն, նախանկատ լինիլ հարց եղև մեզ ի պարագայիցն, վասնորոյ խընդրամատոյց եղէ, ոչ գնալ իմ ընդ նոսա յԱթոռն, այլ հրաման տալ կամ ի Հաղբատ և կամ ի Սևան գնալ ըստ օրինի հոգևորականաց անցուցանել զմնացեալ կեանս։ Բայց նա ետ ինձ զայս հրամանագիր։

«Ի Յոհաննէս Արք Եպիսկոպոսէ ամենայն Հայոց՝ բարձր «բարեհաճութեամբ հաստատելոյ ի Կաթուղիկոսութիւն Սրբոյ «Աթոռոյն Էջմիածնի

« կնիք Առ բարձր արժանապատիւ Մանուէլ վարդապետն
յառաջադրութիւն։

«Որովհետև Տփխիսու Սէյտապատ եղեալ Սուրբ Սարգիս «ուխտատեղին սեպհականեցաւ Սրբոյ Էջմիածնի, վասնորոյ և մեզ «հարկ ի վերայ կայ հոգունակ լինել վասն շինութեան և պայծա«ռութեան նորին առ ի հիմանէ նոր ի նորոյ վայելուչ բարեձևու«թեամբ կառուցանել, ընդ սմին և քանի մի սենեակս յարմարաւոր «կազմել ի բնակութիւն եկաւորեալ ուխտաւորաց։

«Առ այս նկատելով զխոհական գովանի կառավարութիւնս «ձեր, և զարիաջան հետևմունս վասն աթոռապատկան գործոց, «տամ ձեզ զամենայն կառավարութիւն նորա անկախ զումեքէ, «զորոյ արդիւնս միանգամայն ունիք վայելել ի պիտոյս ձեր, վասն «հաւատարիմ հպատակութեանդ Սրբոյ Աթոռոյն։

«Ուրեմն պարտ է քեզ գնալ և բնակիլ անդ, և յորդորելով «զաստուածասէր ժողովուրդս յօգուտ Սրբոյ Եկեղեցւոյն, սկիզբ «առնել շինութեանն արժանաւոր եղանակաւ տնօրինելով, զոր «որպէս յուսամս, ունիք անմահ յիշատակ և անթառամ պարծանք «թողուլ քում ծերութեան։ Եւ այլն յանձնելով զձեզ շնորհաց և «խնամոց Սուրբ Աստուածութեանն եմ ձեզ բարեացակամ, բար«ձրագոյն հաճութեամբ հաստատեալ կաթուղիկոս ամենայն Հայոց «Յոհաննէս։ Ի 1831, ի 6 սեպտ. ի Տփխիս, № 485»։—

(Շարունակելի)